

կին, յունիսի 10ին, քննութիւններն յաջող էին. գրեթէ բոլոր աշակերտներն իւրեանց ստացած թուանշանների զօրութեամբ փոխեցին դասարաններ։ Միայն 7 աշակերտին, որոնք 2 էին ստացել ոմն հայերէնից, ոմն ֆրանսերէնից, ռուսերէնից կամ թուաբանութենից, կը կնաքննութիւն նշանակվեցաւ օգոստոսի վերջին։ Սեպտեմբերին բացվելու է վեցերորդ դասարան, որ դպրանոցական դասընթացի վերջին դասարան է, Յուսալի է, որ յետագայ գպրոցական տարին աշակերտներն առաւել զերմեռանդութեամբ և արդիւնաւորութեամբ պարապեն, մտածելով թէ ի՞նչ յոյսեր կտածեն նոցամասին Վեհափառ Խնամակալը և բոլոր ազգը, Տար երկինք։

### ՊԱՇՏՈՆԱԿԱՆ.

#### ՔԱՂՈՒԱԾՔ ՅՈՐԱԳՐՈՒԹԵԱՆՑ ՍԻՆՈԴԻ ՄԲԲՈՅ ԷԶՄԻԱՆՆԻ:

Ի 27 ապրիլի 1879 տիկ. Ըստ բարեհաճ կամաց Վեհափառ Կաթողիկոսի ամենայն Հայոց հրամանագրեցաւ Աբրահամ Վարդապետին զնալ ի վանս Մոզնոյ եւ ստացեալ ի Ղուկաս Վարդապետէ զամնայն ի մեռս նորա գտանեցեալ վանահայրականութեամբ, ղեացիս, զարդս, անօթեղին Տաճարին, զկան եւ կարասիս եւ զկալուածս վանուցն օրինաւոր ցուցակու վարել զպաշտօն վանահայրութեան ըստ հըրաժնակութեանցն ուղելոց ի Ախոզէ Նախորդի իւրոյ ամենայն հաւատարմութեամբ, իսկ զցուցակն յանձնողական եւ ստացողական ընդ ստորագրութեամբ երկացունցն առաջի առնել Սինօդին։ Զայսմ անօրէնութենէ Ախոզի ծանուցեալ Ղուկաս Վարդապետին պատուիրել յետ յանձնելոյն զվանահայրական հաշիւս Աբրահամ Վարդապետի, մնալ անդ ի միաբանակցութեան։

Ի 130 ապրիլի 1879 տիկ. Ռւենելով ի Նկատի զի պահանջը Գրիգոր Վարդապետի վանահօր Մակարայ վանից զՊօղոս Վարդապետէն որպէս երեւի ի քննութենէն զոր ծերոյ ընդ մեռն Մուշեղ քանանայի տէր Վեւոնդեան, են ըստ ամենայնի անհիմն եւ զրպարտութիւն, եւ յառաջացեալ միմիայն ի Թեթեւամութենէ եւ յընչաքաղցու Թենէ նորս ի արագարտուց, ուստի եւ Թողեալ զայն առանց նետեւանաց ընդ ծեռն կոնսիստորիային Վրաստանի վերադրուցմամբ քննութեան, յայտնել նմա զանքաւականութիւն իշխանութեանս, խստիւ պատուիրելով չլստահանալ միւս անդամ անականի պաղբութեամբ ժանձրացուցանել զիշխանութիւնն։

Ի 18 մայիսի 1879 ամի. 8ոււան իրաւունք հոգեւոր կառավարութեան Ելիսաւետուովու համաձայն համախօսական Թերթին ժողովրդականաց սուրբ Յովհաննէս եկեղեցոյ քաղաքին, զպարոն Յակոբն Լիսիկեան, զպարոն Յովհաննէսն Փաթալեան, եւ յաջորդարանի ի պաշտօն հոգաքարժութեան շինութեանց երկսեռ հոգեւոր դպրոցաց, կրպակաց եւ յաջորդարանի ի պարտիզի սուրբ Յովհաննէս եկեղեցոյ քաղաքին, զպարոն Յակոբն Լիսիկեան, զպարոն Յովհաննէսն Փաթալեան, եւ զպարոն Յովհաննէսն Խոսհակեան, պարտաւորելով զնոսա խորհրդակցութեամբ եւ զործակցութեամբ երեսփոխանի յիշեալ եկեղեցոյ պարոն Նիրսէս Տէր Ներսէսեանի փոյթ կացին պատրաստել զամենատեսակ նիւթօ շինութեանց լուկ երեսփոխանին

պատուիրել դմակարդակն եւ գհաշւեցուցակն ծախուց շինութեանցն առաջարկել Սինօդիս ի հաստատութիւն:

Ի 20 մայիսի 1879 ամի. Հրամայեցաւ զգոհունակութեան եւ բողոքանաց խընդիրական գլուխուածառուր վարդապետէն վանահօր Զարեքայ վանուց եւ զյայտարարութիւն նոյն իօկ վանահօրն առաքելով ... պատուիրել զնալ անձումք ի վանս Զարեքայ եւ առնել առ տեղեաւն զմիշը եւ զանաչառ վարժակատութիւն վասն ամենայն գործողութեանց վանահօրն, ի մասին պայմանադրութեանց նորա ընդ այլոց անձանց վասն հատանելոյ, յանտառէն վանուց զփայտս, զժախտական եւ բանապոյ զածխահորն ի վնաս արդեանց կալուածոցն, նոյնպէս եւ զննել զրոյոր հաշիւս ելից եւ մտից ամենատեսակ արդեանց այնր վանուց ստանալով գիարկաւուելի տեղեկութիւնս եւ տումարս ի հոգեւոր կառավարութենէն Ելիսաւետօպոլու եւ հանդերձ եզրակացութեամբ իւրով առաջի առնել ի անօրէնութիւն Սինօդիս: Խոկ հոգեւոր կառավարութեան Ելիսաւետօպոլու պատուիրել ի դէպս պահանջման հարկին ցուցանել գկարեւորն գործակցութիւն հասուցանելով առ նա եւ պահանջել ի նմանէ տեղեկութիւն, զմատեանս եւ զայլ Թղթեանս, վերաբերեալս սմին իրի:

Ի 21 մայիսի 1879 ամի. Առ առաջարկութիւն հոգեւոր կառավարութեանն Աղէքսանդրապալու հրամայեցաւ տալ նմին զիւել, զի թէեւ արգոյ անդամք յանձնաժողովոյն եւ հողաբարձուք երկսեռ զպրոցաց քաղաքին Աղէքսանդրապալու ըստ սրոշման իւրեանց կամին զիչողաբար իւն Թողուց վերատին զկրպակն ի ծնուս կրպակապանաց նկատմամբ ծախուց ինչ արարելոց ի նոցունց ի կրպակն անդ, սակայն Սինօդս ունելով ի նկատի, նախ զի զայնոսիկ յաւելուած շինութիւնս արարեալ են նորա ինքնագլուխ առանց պայմանի եւ յատկապէս յօգուտ անձանց իւրեանց եւ շահեալ են անտի զտամանապատիկ առաւել վաստակս, քան զոր ծախեալ են ի վերայ շինութեանցն: Երկրորդ ի ժամանակս պատերազմի ունելով ի ժեռս իւրեանց զկրպակն կարի զիւրագնի ըստ տարապայման անփութութեան հոգաբարձուաց չկամելով յաւելու զվարժս կրպակացն հասուցեալ են դպրոցացն զգդալի եւ զմեծակեծ վնասն, ըստ այսու եւ Թողուց վկրպակն դարձեալ յայնպիսում ապարդին դրութեան է ընդդէմ խղճի եւ արդարութեան, մինչդիռ ախներեւ տեսանի ի խնդրագրոց Տէր Սիմէռնեանցի եւ այլոց, այժմ եւս բազումք են ցանկացողք յաւելլոյ բազմօք զվարծս նոցին, ուր թող զի հաշիւք եւ ապառիկք ի վերայ կրպակասանացն ի քանի ամաց հետէ մնան ի խառնաշփոթ եւ ի տարտամ դրութեան ի յայտնի զրկանս զբարցացն, ուստի առ ի արդիւնաւոր առնելոյ զկրպակն ցայնչափ զրկեալս յօգուից եւ պարզելոյ զնաշիւս վարժադրամոց ամացն անցելոց, կարեւոր է եւ արդարութիւնն իսկ պահանջէ պահպանութիւն գէթ մասամբ իւիք կորստեան դպրոցաց, առնել ըպհամայեալ ի Սինօդէս զամբրախօսութիւնն, որում որպէս յուսայ Սինօդս, անշուշտ համախոհք գտցին եւ արգոյ անդամք յանձնաժողովոյն եւ հոգաբարձուք եւ համայնքարեմիտ հասարակութիւնն քաղաքիս, որոց զօգուտն ցանկացին դպրոցացն, ոյր սակս եւ կրկնել հոգեւոր կառավարութեանն զպատուէր բամանի, զի նա փոյթ կալցէ անմիջապէս ի կատարածել գտնօրէնութիւնն Սինօդիս հրամանագրեալս նմին, եւ զկրպարմանէն յայտնեսցէ Սինօդիս, ընդ նմին պատուիրել պահանջնիլ յորոց հարկն է զմիշալ հաշիւս թէ յոր ժամանակաց, եւ որ կրպակք ընդ որով համարաւ ի ժեռս

րոց իցէ յականէ անուանէ յոր ժամանակաց նետէ զորքան վարժադրամս յիւրաքանչիւր ամի կամ ի քառամնեակս վճարեալ իցեն, որքան գումար իցէ դոյսինալ, յինչ պէտս զորդազրեալ, եւ յորոց վերսոյ, որքան մնան ապառիկը, նոյնպէս եւ պահանջել դանվաւեր համարեալ պատճէնմն դաշնադրոց իւրաքանչիւր կրպակի, եւ այնպէս վերչաւորեալ զհաշիւմն եթէ ննար ինչ իցէ իրաւախոհութեամբ, որպիսին յարմար եւ օգուաւէտ դատիցին խորհրդակցութեամբ ընդ յանձնաժողովոյն եւ հոգաբարձութեամնն իսկ ի մասին կրպակին տուելոյ Տէր Սիմէօնեանցին առնել զառանձին կարգադրութիւն:

850 մայիսի 1879 ամի. Հաճ եւ հաւան գտեալ ընդ վերջին առաջարկութիւն թեմակալին Հայոց Տիփիսու Գերազատիւ Գարրիէլ Արքապիսկոպոսին, ըստ նախընթաց համութեան Վեհափառ Կաթողիկոսի ամենայն Հայոց, հրամայեցաւ տալ նմա զուծումն վասն կարգելոյ ի պաշտօնն թեմական տեսչի համայն Ռւսումնարանաց Հայոց Տիփիսու վիճակի վՅարդոյ Գէորգն Բարխուդարեանց տարեկան երկու հազար բուրգի ռոճկաւ եւ ծախուը որպէս եւ խօսեցեալն է ընդ նմա:

Ի 4 յունիսի 1879 ամի. Ըստ պատճառանացն բացատրելոց ի յայտարարութեան փոխանորդին Ղարաբաղու, հրամայեցաւ տալ նմա զուծումն վասն հրաւիրելոյ եւ կարգելոյ ի պաշտօն թեմական Տեսչի համայն Ռւսումնարանաց Հայոց Ղարաբաղու վիճակի զայլ յարարաւոր ընդունակ եւ զործունեայ անձն, յատկացուցանելով նըմա տարեկան ռոճիկ ի վիճակային արդեանց հինգ հարիւր եւ ի գումարաց թեմական դպրոցին հինգ հարիւր ռուբլիս ըստ իւրաւուն նկատողութեան ամենն զհազար ռուբլիս, զորոյ զտուչութիւնն շարունակել ի Ա - Էն սոյն յունիսի: Զայսմանէ տալով տեղեկութիւն եւ կոնսիստորիային Հայոց Ղարաբաղու պատուիրել զնշանակեալ հինգ հարիւր ռուբլին տալ թեմական Տեսչին ի վիճակային գումարաց: Իսկ զինգ հարիւր ռուբլին զորս ստանայր Արխատակէս վիրդապետն յուսումնարանական գումարաց այսուհետեւ տալ նմա ի վիճակային արդեանց:

Ի 45 յունիսի 1879 ամի. Ի Սինօդիս լուան զգեկուցումն թէ ըստ սովորութեան տեղոյս վարժապետութիւնը պարզեւատրութեանց Հոգեւորականաց Հայոց խաչի եւ փիլոնաւ բաշխին ի Վեհափառ Կաթողիկոսաց ամենայն Հայոց, եւ զինի մանուան նոցա ըստ սովորութեան վերադարձուցեալ լինին պարզեւըն այնորիկ ի Սինօդն Արքոյ Էջմիածնի վասն պահպանութեան ի շարս զոյից Սուրբ Աթուոյս: Ռւստի հրամայեցաւ զիւրոզրելոցն տալով զիտել թեմական Ատենին Հայոց Վրաստանի պատուիրել նմին եթէ գտանիցին այնպիսիք ժողովեալ յԱտենի նորին, անյապաղ առաջի առնել Սինօդիս: